Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ «29» ՀՈՒՆՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ N 25-Ա ՀՐԱՄԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1917-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի թիվ 431-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 8-րդ կետի 15-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության օրինականության վերահսկողության տեսչության պետին իրավունք վերապահել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում, ՔԿԱԳ տարածքային մարմիններում, նոտարական պալատում և նոտարական գրասենյակներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ենթակայությանը հանձնված իրավաբանական անձանց գործունեության ստուգումների և ուսումնասիրությունների, ծառայողական քննությունների և կարգապահական վարույթների իրականացման, դրանց արդյունքների ամփոփման և մեղավոր անձնաց նկատմամբ իրավասու անձի կողմից պատասխանատվության միջոցներ կիրառելու շրջանակներում նշված մարմինների ղեկավարներից և աշխատակիցներից, նոտարներից պահանջել ներկայացնել և ստանալ բացատրություններ, պարզաբանումներ, զեկուցագրեր, ստուգմանը, ուսումնասիրությանը, ծառայողական քննությանը, կարգապահական վարույթին, ինչպես նաև պատասխանատվության միջոցների կիրառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր, ինչպես նաև տալ ներկայացված պահանջների կատարմանն ուղղված հանձնարարականներ:

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
Անձնակազմի կառավարման
վարչության պետ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ